ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 11 » վեցերորդ 2022 թ. N 22-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԳՐԿՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի N 49-Ա/1 հրամանով հաստատված աշխատակարգի 6-րդ կետի պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար Նախարարության պաշտոնական կայքէջում հրապարակված հայտարարության հիման վրա դիմած Նառա Փերիխանյանի դիմումը:

2. Խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ դիմումի մերժման համար հիմք են հանդիսացել այն հանգամանքները, ըստ որի դիմումատուն չի ներկայացրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի N 49-Ա/1 հրամանով հաստատված աշխատակարգի 4-րդ կետում նշված փաստաթղթերը, մասնավորապես՝ դիմումին կից չեն ներկայացվել սոցիալական

պաշտպանության ոլորտում մասնագիտական փորձառության առկայությունը հավաստող փաստաթղթեր, ոլորտին առնչվող հրապարակումներ, փորձագիտական աշխատանքների մասին փաստաթղթեր, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրեր, նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբերի և հանձնաժողովների աշխատանքներին մասնակցությունը հիմնավորող փաստաթղթեր:

3. Նախարարության մամուլի քարտուղարին՝ հրամանով հաստատված աշխատակարգի 6-րդ կետով սահմանված ժամկետներում դիմումը մերժելու մասին որոշումը տեղեկացնել դիմումատուին, իսկ սույն հրամանը հրապարակել Նախարարության պաշտոնական կայքէջում:

2/11/2022

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ